

Հայաստանի Հանրապետության վարչապետ
Տիգրան Սարգսյանի բացման խոսքը
Սոցիոլոգների համաշխարհային կոնգրեսում

Հարգելի գործընկերներ,
տիկնայք և պարոնայք,

Կառավարության անունից ողջունում եմ Համաշխարհային կոնգրեսի մասնակիցներին:

Մենք հպարտ ենք, որ այսպիսի նշանակալից միջոցառումը այս բեկումնային ժամանակաշրջանում անցկացվում է Արարատ լեռան ստորոտին, այն լեռան, որտեղ հանգրվանել է Նոյան Տապանը: Դա ինչ-որ տեղ խորհրդանշում է նորի սկիզբը:

Հարցերը, որոնք մտահոգում են մեզ, բազմազան են: Ես ձեր ուշադրությանը կներկայացնեմ մի քանի դատողություն:

1. Ներկայումս աշխարհում ընթացող գործընթացների վերաբերյալ կա առնվազն երկու վարկած՝

- **առաջին**՝ մենք գործ ունենք հերթական տնտեսական ճգնաժամի հետ, իսկ ճգնաժամերն ունեն ցիկլային բնույթ: Անհրաժեշտ է իրականացնել հակացիկլային գործողություններ, և կվերականգնվեն շուկայական տնտեսության բոլոր օրինաչափությունները, որոնց մի մասն այսօր ժամանակավորապես չի գործում;
- **երկրորդ**՝ իրականում սա հերթական տնտեսական ճգնաժամ չէ, այլ մենք գործ ունենք նոր աշխարհի ձևավորման հետ, իսկ դա նշանակում է, որ ճգնաժամը կարող է հաղթահարվել այն նոր օրինաչափությունների բացահայտման միջոցով, որոնք բնորոշ են լինելու նոր աշխարհին:

Քանի որ անորոշության աստիճանն այսօր շատ բարձր է, անհրաժեշտ է որոնումները շարունակել երկու հարթություններում՝ գուրահեռաբար՝ և՛ ինդուստրիալ հասարակության, և՛ հետինդուստրիալ աշխարհի կառուցման տրամաբանությամբ:

2. Այսօր պետությունների գերակշիռ մասը, այդ թվում նաև Հայաստանը, հակաճգնաժամային միջոցառումներն իրականացնում են ինդուստրիալ հասարակության տրամաբանությամբ՝ որդեգրելով ընդլայնողական, խթանողական մոնետար և ֆիսկալ քաղաքականություն:

Շատ ավելի դժվար է հասկանալ, թե ինչպիսին կլինի նոր աշխարհը և ինչ գործողություններ պետք է նախաձեռնել այսօր, որպեսզի վաղը մենք հաղթողների շարքում հայտնվելու հնարավորություն ունենանք:

3. Մեր դատողությունների մեթոդաբանությունը հիմնված է հետևյալ հինգ հենասյուների վրա, որոնք բնորոշում են ժամանակակից գործընթացների էությունը.

- **1-ին հենասյուն.** ժամանակակից աշխարհի փոփոխությունների արագությունը: Արագությունն իր հետքն է թողնում մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտների վրա,
- **2-րդ հենասյուն.** ժամանակակից աշխարհի փոքրացումը: Փոքրացումն էապես բարձրացնում է փոխկապակցվածության և փոխազդեցության աստիճանը,
- **3-րդ հենասյուն.** մտագործունեությունը (**mental-creative activity**) փոփոխվող աշխարհի հենքային (**basic**) գործընթացն է՝ փոխարինելով ապրանքների և ծառայությունների արտադրությանը,
- **4-րդ հենասյուն.** հոգևոր և մշակութային արժեքների պահպանումը դառնում է ազգի գոյատևման երաշխիքը: Պետությունների համակեցության խնդիրը **21-րդ** դարում տեղափոխվում է քաղաքակրթությունների երկխոսության և մրցակցության դաշտ:
- **5-րդ հենասյուն.** ժամանակակից մարդու գիտակցված պահանջը ինքնաարտահայտումն ու ինքնաիրացումն են: Դրա համար անհրաժեշտ է ապահովել ազատությունների իրացման դաշտ:

4. Ժամանակակից ճգնաժամը ձևավորեց բանավեճ երկու ուղղությունների միջև՝

ՈՒՆԻՖԻԿԱՅՈՒՄ
Միասնական չափորոշիչների
ուղեգիր

ՅՈՒՐՕՐԻՆԱԿԱՆԱՅՈՒՄ
Յուրօրինակությունների
համակեցության ձևերի
հայտնաբերման ուղեգիր

- Ունիֆիկացման հատկանիշներն են՝
 - i. կառավարումը միասնական կենտրոնից՝ միասնական գաղափարախոսությամբ, միասնական կանոնների սահմանմամբ և պահպանմամբ,
 - ii. զանգվածների ենթարկումը միասնական կանոնների:
- Յուրօրինականացման հատկանիշներն են՝
 - i. բազմաբևեռ և բազմացանցային աշխարհի ձևավորումը,
 - ii. սեփական աշխարհի կառուցման, սեփական կանոնների ներդրման հնարավորությունը;
 - iii. անհատի՝ սեփական աշխարհի ձևավորման ձգտումը:

5. 5-րդ դատողությունն այն է, որ ժամանակակից աշխարհը լի է բազմազան, տարատեսակ և տարաբնույթ հասարակություններով, որոնք գտնվում են զարգացման տարբեր աստիճաններում: Այդ բազմազանությունը պայմանավորված է և՛ հենքային գործընթացներով, և՛ տարբեր արժեքային (մշակութային) համակարգերով: Սակայն այդ հասարակությունների կյանքի ինքնակազմակերպման ձևերը նույն չափով բազմազան չեն: Ինքնակազմակերպման ձևերը շատ հաճախ չեն համապատասխանում հասարակական կյանքի բովանդակությանը, և, դրանով իսկ, խոչընդոտում են այդ հասարակությունների բնականոն զարգացումը: Անհրաժեշտ է առաջ քաշել հասարակության ինքնակազմակերպման ձևերի նոր պարադիգմ՝ մի կողմից, ընդունելով ձևերի բազմազանության անհրաժեշտությունը, մյուս կողմից, առաջադրելով համակեցության նոր կանոններ:
6. Ինչ է տեղի ունենալու ազգ-պետությունների հետ **21**-րդ դարում: Մի կողմից, մենք տեսնում ենք ինդուստրիալ զարգացման փուլում գտնվող որոշ ազգերի ինքնագիտակցության և ինքնակազմակերպման ներուժի կուտակում, ինչը մղում է նրանց սեփական պետություն ունենալու պայքարի, և դա անխուսափելի մի փուլ է նրանց բնականոն զարգացման ճանապարհին: Մյուս կողմից, հետինդուստրիալ հասարակության տրամաբանությամբ զարգացող հասարակություններում մենք ականատես ենք պետության սահմաններից դուրս միավորման նոր ձևերի ստեղծմանը: Այս միտումների ներքո անհրաժեշտ է կերտել մինչինդուստրիալ, ինդուստրիալ և հետինդուստրիալ հասարակությունների ինքնակազմակերպման ձևերի համակեցության կանոններ (**rules of co-existence**): Այսինքն, խոսքը վերաբերում է ոչ միայն քաղաքակրթությունների երկխոսության, այլ նաև՝ ինքնակազմակերպման տարբեր ձևերի և ձևաչափերի ինստիտուցիոնալ հարաբերություններին:
7. 7-րդ դատողությունն այն է, որ բոլոր հասարակություններ, անկախ զարգացման աստիճանից, ներխուժում է **ազատության ոգին**: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հետինդուստրիալ հասարակության հիմնարար գործընթացը (**basic process**) մտագործունեությունն է, վերջինիս հիմնական ռեսուրսը ինտելեկտն է, իսկ ինտելեկտի կրողը անհատն է, ում օղի և ջրի պես անհրաժեշտ է ինքնափրացման դաշտ:
- 21**-րդ դարում ինքնանույնականացումը (**self-identification**) սեփական աշխարհի կառուցումն է: Այս համատեքստում, ազատությունը նոր արժեքների արարման և իրացման հնարավորությունն է: Այսինքն, ժամանակակից մարդը մշտական որոնումների մեջ գտնվող էակ է, որը պատրաստ է ընկալել նոր գաղափարներ և ապրել արագ փոփոխվող և

փոքրացող աշխարհում: Ազատամտության վիրուսը սահման չի ճանաչում և անմիջապես հայտնվում է այնտեղ, որտեղ կա մտածող մարդ:

Հարգելի գործընկերներ, ամփոփելով խոսքս՝ ցանկանում եմ ընդգծել, որ մարդկության պատմության ներկա ժամանակահատվածը ծնում է աշխարհում տեղի ունեցող սոցիալական ֆենոմենների պրոֆեսիոնալ մեկնաբանման անհրաժեշտություն: Մենք հուսով ենք, որ կոնգրեսը կօգնի մոտենալ մեզ մտահոգող հետևյալ հարցերի պատասխաններին՝

- Արդյոք ներկայիս ճգնաժամը սոցիալակա՞ն, թե՞ ֆինանսատնտեսական բնույթի ճգնաժամ է;
- Հնարավո՞ր է արդյոք ուրվագծել համակեցության նոր շրջանակները (ինչպիսի՞ն է հետինդուստրիալ աշխարհի ձևավորման ճանապարհը):
- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենալու ազգերի ինքնակազմակերպման ձևերի և բովանդակության միջև:
- Կա՞ արդյոք նոր պարադիգմ, որն ապահովում է բազմազանությունների համերաշխ համակեցությունը:
- Ազատ մտածողության («open mind») դարաշրջանում գտնել նույնականացման որոնման բանաձևերը:

Հարգելի ընկերներ,

Հուսով եմ, որ այն մթնոլորտը, որ ստեղծվել է կոնգրեսի կազմակերպիչների ջանքերի շնորհիվ և մասնակիցների մասնագիտական բարձր մակարդակը լավ նախադրյալներ են, որպեսզի կոնգրեսի ընթացքում ծնվեն նոր, առաջադեմ գաղափարներ և ընդլայնվեն յուրաքանչյուր մասնակցի աշխարհընկալման շրջանակները:

Կոնգրեսին մաղթում եմ բեղմնավոր աշխատանք:

Շնորհակալություն ուշադրության համար: